ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Յուրգիս Բալտրուշայտիս կրտսերի (1903-1988թթ.) անվան մրցանակի շնորհման

1. Լիտվացի պատմաբան, արվեստաբան և համեմատական արվեստի հետազոտությունների հիմնադիր Յուրգիս Բալտրուշայտիս կրտսերի անվան ամենամյա դրամական մրցանակը սահմանել է «Պետրոս Ալոյանի» անվան հիմնադրամը՝ Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության դեսպանության, "Mediamax" լրատվական գործակալության և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ՝ «Պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում» անվանակարգով համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի տարվա լավագույն նախագծային աշխատանքի համար: Դրամական մրցանակը շնորհվում է համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսն ավարտած և մրցույթում հաղթած ուսանողին և կազմում է 1500 (հազար հինգ հարյուր) եվրո:

2. Մրցույթին ներկայացվող աշխատանքների նախնական ընտրությունը /մինչև 5 աշխատանք/ կատարվում է ճարտարապետության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից՝ նախագծային աշխատանքների պաշտպանությունից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հունիս ամսվա ընթացքում:

3. Լավագույն աշխատանքի վերջնական ընտրության համար կազմավորվում է «Պետրոս Ալոյանի» անվան հիմնադրամի, Լիտվայի Հանրապետության դեսպանության, "Mediamax" լրատվական գործակալության և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներկայացուցիչներից բաղկացած հանձնախումբ՝ հետևյալ կազմով և ձայների բաշխումով՝

ա. «Պետրոս Ալոյանի» անվան հիմնադրամի ներկայացուցիչ – 2 ձայն,

բ. "Mediamax" լրատվական գործակալության ներկայացուցիչ -1 ձայն,

գ. Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության դեսպանության ներկայացուցիչ – 1 ձայն,

դ. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներկայացուցիչ – 1 ձայն:

4. Տարվա լավագույն աշխատանքն ընտրվում է նախնական ընտրությունն անցած աշխատանքներից՝ մինչև սեպտեմբերի 30-ը:

5. Մրցանակի հանձնման արարողությունը իրականացվում է հոկտեմբերի վերջին տասնօրյակում՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում:

6. Մրցույթում հաղթողը դրամական պարգևից բացի ստանում է Լիտվայի Հանրապետության դեսպանության, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, "Mediamax" լրատվական գործակալության և որպես գլխավոր հովանավոր՝ «Պետրոս Ալոյանի» անվան հիմնադրամի կողմից տրված հավաստագիր:

7. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով:

Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան — Էրիկաս Պետրիկաս

«Պետրոս Ալոյան» հիմնադրամ տնօրեն — Հայկ Ալոյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր — Գագիկ Գալստյան